

շատ անելի հեշտութեամբ կը սորվի գէշ բառ մը, քան աղէկ բառ մը: Ու երբ որ աղէկ բառը սորվի, կը գործածէ զայն կեղծաւորութեան համար, ինչպէս դուն, քիչ առաջ, ինծի ըսիր «եղբայր»: Դժբախտաբար, երբեք պիտի չկրնաք եղբայրանալ մեզի հետ:

-Ինչո՞ւ այդպէս կը կարծես:

-Քանզի անհուն է մեր տարբերութիւնը: Ո՛չ մէկ կամուրջ կրնայ մեզ միացնել իրարու: Կարծես մենք տարբեր մոլորակներու բնակիչներ ենք...

-Օրինակներով եթէ խօսիս, շատ շնորհակալ կ'ըլլամ:

-Դուք «բարոյական» ունիք, որովհետեւ անբարոյականութեան մէջ էք միշտ: Մենք անբարոյականութիւն չունինք, որ ունենանք «բարոյական»: Դուք հազար տեսակ կրօնք ունիք, քանի որ չէք կրցած ըմբռնել Արարչութիւնը: Դուք Աստուածը ներկայացուցած էք 10 հազար տեսակ հակասական ձեւերով ու ներհայեցողութեամբ: Մենք ո՛չ կրօնք ունինք, ո՛չ տաճար, ո՛չ ալ այն սեւ մարդիկը, որոնց կղեր կ'ըսէք: Մենք ձերբազատուածներ, ազատագրուածներ ենք ու կ'ապրինք խորհուրդին իմաստութիւնը, որով պետք չունինք նկարի, արձանի, բացատրութեան, աղօթատեղիի, ինչպէս նաեւ՝ սեւ մարդերու: Քսան դար առաջ Յիսուս հիմնեց բարձրագոյնը վարդապետութիւններուն՝ քրիստոնէութիւնը: Ու քսան դար է, որ քայլ մը չէք առած դէպի Քրիստոնէութիւն: Ընդհակառակն, անդադար յետադիմած էք: Դուք աշխարհը, գծագրութեան տեղ կարծելով, սահմաններ գծած էք: Մենք չունինք սահման, մենք կը սիրենք անսահմանութիւնը: Դուք օրէնքի ու կանոնի գերիներ էք, մինչդէռ մենք ունինք կեանք մը, որ համակ ազատութիւն է: Մեր ազատութեան թշնամիները դո՛ւք էք միայն: Ահա այսօր գերի մըն եմ ձեր ձեռքը, սակայն, մտածումս ազատ է, ու կ'ըսեմ մեր մէջ եղած տարբերութիւնները: Դուք թոյն էք ու կը գործածէք թոյն: Կը խմէք, կը ծխէք: Ո՛չ մէկ կապիկ այդ թոյններուն կը մօտենայ: Դուք ստրուկ էք, գործով ալ, կարծիքով ալ, աշխատութիւնով ալ: Կ'ընդօրինակէք իրարու ձեւը, իրարու խօսքը, իրարու գործը: Մենք անկախ ենք մեր շարժումներուն մէջ, ըլլան անոնք ներքին կամ արտաքին: Մենք անհատապաշտ ենք, մինչդէռ դուք մարդկութիւն կոչուող գործարանին մէկ մասնիկն էք: Մարդը առանձին ոչինչ է, անկար, անընդունակ ապրելու: Կապիկ մը միս